

Վարժապետն բռնած ղինքն իրրու ծանր բեռ մը տարաւ առ Տեսուչն, և տպա միայնակ դարձաւ 'ի դասարանն, և նստեցաւ ստոլին առջև, ձեռքք գլուխը բռնելով, առաւաղեալ, այնպիսի խոնր և վշտացեալ կերպարանօք, որ տեսողաց գուժը կը շարժէր: — Յետ երեսոնն ամաց որ դասախօսութիւն կ'ընէմ, — աղաղակեց տխրաւայն՝ գլուխը շարժելով: Ոչ որ շունչ կ'առնոյր, Բարկութենէն ձեռքերը կը գողգողային, և Խակտին վրայ ունեցած ուղիղ կնձիւնն այնքան խոր կ'երևար, որ կարծես վէրք ժ'է: Եղկելի՛ վարժապետ: Ամէնքն կը կարեկցէին: Տէռօսսի կանգնեցաւ և ըսաւ. — Պ. Վարժապետ, մի՛ վշտանար, մենք զքեզ կը սիրենք: — Այն ատեն զուարթացաւ նա սակաւ մի և ըսաւ. — Տղայք, առաջ տանինք մեր դասը:



ԿԱՐՐՈՒՄ ԿՈՒՆՈՅ

Կարրլոս Կունոյ՝ ներկայ դարուս հռչակաւոր երգահաններէն մին, ծնաւ 'ի Բարիզ յամին 1818 Յունիս 17ին: Սա իւր նախնական ուսումները կատարելէն յետոյ, մտաւ Բարիզու երաժշտութեան Բարձրագոյն Վարժարանը, ուր իրեն առաջնորդ ունեցաւ երաժշտական

ներդաշնակութեան մէջ Ռէիլա, Լըզիկէօր, Հալէվի և Ռաէր վարժապետը, Յամին 1839 երաժշտական մրցահանդէս մի տեղի ունեցաւ 'ի Հռոմ. ուր ներկայացնելով իւր ֆէրնանտա (Fernanda) անուամբ շարագրած երգը, յաղթող հանդիսանալով արժանացաւ մեծ մրցանակին: Այն ատեն յիտալիա եկաւ, հռչակաւոր Պալէստրինային երաժշտութեան ոճը մեծ ջանիւ և եռանդեամբ ուսաւ. և յամին 1841 ներկայացնել տուաւ 'ի Հռոմ Գաղղիացւոց եկեղեցւոյն մէջ՝ երեք ձայնով հանդիսաւոր պատարագ մը հանդերձ նուագարանօք, որ և իբր կատարեալ գործ մի դատուեցաւ:

Յամին 1843 դարձաւ 'ի Բարիզ, ուր վեց տարի անընդհատ Միսիոն էղլանժէր (Mission étrangère) անուամբ եկեղեցւոյն մէջ երգահան և վարժապետ եղաւ, և քիչ փնաց որ նոյն ժամանակ եկեղեցական զգեստ ընդունէր, Յետ շարագրելոյ այլ և այլ եկեղեցական երգեր՝ հանդիսացոյց զանոնք հասարակութեան առջև 'ի Լոնտրա, որք ամէնն ալ՝ նման առաջնոց շատ մեծ ընդունելութիւն գտան: 1851 տարւոյն ուզեց փորձել իւր բախտը՝ Բարիզու Օփերայի մէջ ներկայացնել տալով իւր Սափօ (Sapho) անուամբ շարագրած բնարերգութիւնը, ինչպէս նաև Լա Նոն սակկլանթ (La Nonne sanglante) գործը, որք բաւական յաջող ելք ունեցան: Յետոյ շարագրեց երեք արարուածով կատակերգութիւն մի Ակամայ բժիշկ (le Médecin malgré lui), զոր ներկայացնելով Բարիզու Քլուստերգակսն թատրոնին մէջ 1858 տարւոյն Յունուար 15ին, նոյնպէս յաջող ելք ունեցաւ: Աստի քաջալերուած հունոյ, իւր Ֆաուստ (Faust) կոչուած շարագրութիւնը հրատարակեց, զոր ներկայացուցին դարձեալ Բարիզու միևնոյն Քլուստերգակսն թատրոնին մէջ յամին 1852 Մարտ 19ին. իսկ իտալիոյ մէջ՝ առաջին անգամ Միլանու Սքալա կոչուած թատրոնին մէջ ներկայացուցին 'ի 1862 ամին Նոյեմբեր 11ին, Յիրաւի վսեմ՝ շարագրութիւն. զի այնպիսի հոգեշարժ և ազդու քաղցր ներշնչմանց մէջ 'ի գործ դրեր է երաժշտութեան ամենայն փոքրիկ կանոններն ևս, որով բոլոր աշխարհ հռչակուեցաւ նորա անունն՝ մեծաւ զարմանք այնպիսի գերաշխարհիկ հանճարոյ մը վրայ: Ուրիշ մեծանուն վարժապետք ևս շարագրեր են Ֆաուստ, ինչպէս Շիւման, Սթօր և Պօլթոյ. այլ և ոչ միոյն արտադրութիւնն կրցաւ հուսաարիւ կունոյին շարագրութեան:

Յետ այն յաղթանակին՝ մեծ գոհութեամբ և յաջողութեամբ գրեց հունոյ ուրիշ այլ և այլ թատրերգութիւններ և ձայներգութիւններ, ինչպէս են, Ֆիլեմօն և Պօսիս (Philemon et Baucis), Աղաւնի (La Colombe), Թագուհին Սաբայ (La Reine de Saba), Միրէյլ (Mireille) են. բայց և ոչ մին կրցաւ երբեք հաւասարիլ Ֆաուստիին վսեմութեան: Միծ անուն հանեց դարձեալ Ռօմէոյ և Յուլիէտայ (Romeo e Giulietta) գործովն, զոր ներկայացուցին Բարիզու

Քնարերգական թատրոնին մէջ յամին 1867 Ապրիլի 27ին, և իւր բովանդակ գործոց մէջ երկրորդ դատուեցաւ յետ Խառնադին:

1870 տարւոյն երբ Գաղղիոյ և Բրուսիոյ մէջ պատերազմն բացուեցաւ՝ զնաց ՚ի Լոնտրա, ուր յաճախ այլ և այլ մեծամեծ խմբերգութիւններ կառավարեց, և հոն կեցաւ մինչև 1875 տարին, ուր իւր անուամբ խմբերգութեանց ընկերութիւն մ' ևս հիմնեց: Իսկ 1875ին դարձաւ ՚ի Բարիզ, և նորէն միեւնոյն գործօնէութեամբ սկսաւ այլ և այլ շարագրութիւններ յօրինել, և գրեց Հինգ Մարտի (Cinq-Mars), Պոլիպտու (Polyeucte), ևն:

Կունոյ շարագրեց ևս՝ Զայնաշուր պատարագ (Messe solennelle) մի, Մայր կայր առ խաչին (Stabat Mater):

Ունի նաև Պատարագ մի ի պատիւ Յովհաննա տ' Արքին և ուրիշ շատ մը եկեղեցական շարագրութիւնք, զանազան Պարերգութիւնք (Ballades) և այլևայլ կտորներ Ողբերգութեանց (Tragédies). ունի ևս զբաժ գաշնակի և ուրիշ նուագարանաց համար այլ և այլ կտորներ, շատ մը գեղեցիկ վէպեր (Romans) ընկերակցութեամբ գաշնակի, որք հրաշալի գործեր են, ինչպէս օրինակ իմն. Ողջոյն քեզ Մարիամ (Ave Maria), Յայգերգ (Sérénade) ևն. իսկ այժմ կը պարապի Քարլոպոլս Բուրսէյ անուամբ նոր շարագրութեան մը:

Կունոյ 1847ին ամուսնացաւ Եփմեքմանի օրիորդին հետ. իսկ 1857 ամին Օգոստոսի 15ին ասպետ ընտրուեցաւ՝ պատուոյ լեգէոնով. իսկ 1866ին Գաղղիոյ երաժշտութեան ակադեմիային անդամ եղաւ:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

ԳԻՑԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Սիկորն Գիգարանուրեան: — Գիգարանուրիւն կոչուի առասպելաց կամ մուրա հաւատոց ամբողջութիւնը, որոնք Յունաց և Հռովմայեաց և միւս ազգաց կրօնքին հիմը կազմեն, բաց ՚ի Հրէից: Այս երկու խօսքով բարդուած Յունական mythologie բառն նշանակէ առասպելաբանութիւն ուստ աստուածոց, կիսաստուածոց և գիւցալ գանց վրայ:

Սուտ աստուածոց պաշտօնը՝ կոչուի կռապաշտութիւն: Նախ քննել և ճանչնալ պէտք է այս առասպելաց ծագումը. և առ այս՝ չարէ է բարձրանալ ցիանձարուրս մարգրեութեան: Աստուած երբ զմարդն գրաւ երկրիս վրայ, ինքզինքն ծանոց անոր իբրև ստեղծիչ իւր, և պատուիրեց որ այս ծանօթութիւնը աւանդէ իւր ժառանգներուն: — Այս կարգի պահուեցաւ, և Աստուծոյ և իւր օրինաց գիտութիւնն ի սկզբան հաւատարմութեամբ անցաւ յազգաց յազգս: Բայց երբ մարդիկ բազմացան և նոցա թիւն աճելով միշտ՝ ստիպեցան հեռանալ ՚ի վայրացն՝ ուր մարդկային